

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՅՈՒՆԱՐՁԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁԸ

Հայ ժողովրդի բազմադարեան մշակութային ժառանգութեան մէջ նշանակալից տեղ են գրաւում յատկապէս ճարտարապէտութեան համաշխարհային պատմութեան հիմնական փուլերին պատկանող հազարաւոր յուշարձաններ.

- Նէոլիթեան եւ բրոնզեդարեան բնակավայրեր, դամբարանադաշտեր, մէգալիթեան յուշարձաններ՝ կրոմլեխներ, դոլմեններ, մենհիրներ, վիշապներ եւ այլն (Ք.ա. ի.-Ժ.):
- Ուրարտական միջնաբերդեր, տաճարներ, պալատական կառոյցներ, ոռոգման ջրանցքներ, սեպագիր յուշակոթողներ եւ այլն (Ք.ա. Թ.-Զ.):
- Անտիկ, հեթանոսական եւ հելենիստական տաճարներ, ամրոցներ, բաղնիքներ, խճանկարներ, քանդակներ եւ այլն (Ք.ա. Դ.-Ք.):
- Վաղմիջնադարեան պալատական կառոյցներ, եկեղեցիներ, վկայարաններ, յուշակոթողներ եւ այլն (Դ.-Է.):
- Զարդացած միջնադարեան քաղաքներ, ամրոցներ, պալատական կառոյցներ, եկեղեցիներ, մենաստաններ, վանքեր, խչքարեր եւ այլն (Թ.-ԺԴ.):
- Ուշմիջնադարեան քաղաքաշինական եւ վանական համալիրներ, եկեղեցիներ, խաչքարեր, բերդեր, ժամատներ, գրատներ, զանգակատներ, ժողովրդական բնակելի տներ, քարաւանատներ, կամուրջներ, բաղնիքներ, արտադրական շէնքեր եւ այլն (Ժ.Զ.-Ժ.Հ.):
- Նոր եւ նորագոյն շրջանների պատմական քաղաքներ, քաղաքաշինական ու ճարտարապետական համալիրներ, յուշակոթողներ, քաղաքացիական, արդիւնաբերական, ճարտարագիտական կառոյցներ եւ այլն (ԺԹ.-Ժ.Ի.):

**Զնայած պատմութեան եւ ժամանակի անողոք ազդեցութիւններին՝ հայ ժողովուրդը ոչ միայն կերտել է այդ բազմաթիւ եւ բազմատեսակ յուշարձանները, այլ առաջին իսկ նպաստաւոր պայմաններում աշխատել է պահպանել, նորոգել եւ վերակառուցել դրանք:**

Պէտք է նշել, որ մեր նախնիների վերականգնման աշխատանքների նպատակը, ի հարկէ, հիմնականում պայմանաւորուած էր կառույցի կամ համալիրի առաւելապէս գործառական նկատումներով։ Այսինքն, նրանց համար այդ կառույցներն ունէին զուտ գործնական նշանակութիւն, եւ, կարծես թէ, անտեսւում էին նրա պատմական եւ ճարտարապետական արժէքները։ Հին վերականգնողները վերակառուցում, լրացնում կամ ձեւափոխում էին կառույց իրենց դարաշրջանին բնորոշ ձեւերով, օրինաչափութիւններով, ոճական առանձնայատկութիւններով։ Դա հնի կուրօրէն ընդօրինակում չէր, սակայն յետագայ շինարարական շերտերը, որպէս կանոն, զարմանալիօրէն համահունչ էին թէ՝ տուեալ միջավայրին, եւ թէ՛ հին ձեւերին։

Հայաստանում գիտական վերականգնման գործընթացը թերեւս սկսուեց աւելի ուշ քան Եւրոպական երկրներում, եւ այն կարելի է բաժանել հետեւեալ չորս փուլերի։

Ա.- ի. դարի 20ական թուականներից մինչեւ 60ական թուականները։ Սա հայ ճարտարապետութեան տեսութեան եւ պատմութեան ձեւաւորման սկզբնական շրջանն էր՝ տեղեկութեան նախնական փորձառական վաւերագրման ժամանակաշրջանը։

Այս փուլում հայ վերականգնողները անվերապահօրէն հետեւելով 1931ի Աթէնքի խարտիայի հիմնադրոյթներին՝ որպէս աւերուած յուշարձանների պահպանման միջոց, բծախնդրօրէն կիրառում էին միայն ամրակայման (կոնսերուացիայ) կամ անասթիլոզի մեթոդները։

Այդ ժամանակահատուածում վերականգնման աշխատանքներ են կատարուել հետեւեալ յուշարձաններում։ Երերոյքի բազիլիկայ (1928), Կեչառիսի վանական համալիր (1939-1948), Թովհաննավանքի վանական համալիր (1948, 1954), Օշականի Մանկանոց Ս. Սիոն եկեղեցի (1950), Ս. Մարինէ եկեղեցի (1950), Տեղերի վանական համալիր (1950-1953), Սեւանայ թերակղզու եկեղեցիներ (1953-1958), Սանահինի վանական համալիր (1953-1958), Մարմաշէնի վանական համալիր (1954-1955), Թալինի

քարանաստուն, Աւանի տաճար, Զուխտակ վանք, Կարմրաւոր եկեղեցի (1954-1956), Արտաւազդիկ եկեղեցի (1958), Թալինի Մեծ եկեղեցի (1958), Պտղնի տաճար (1959), Զուարթնոցի տաճար (1958-1960):



Երերոյի բազիլիկայ



Թալինի քարանաստուն

Աւանի տաճար



Զուխտակ վանք



Թալինի Մոծ եկեղեցի



Զուարքնոցի Ս. Գրիգոր տաճար


Բ.- 1960ական թուականներից մինչեւ 1970ական թուականները: Այդ ժամանակաշրջանում արդէն իսկ ձեւաւորուած էր թէ՛ հայ պատմագիտութիւնը, թէ՛ հայ ճարտարապետութեան տեսութիւնը, կատարուած էին գիտական զգալի վերլուծութիւններ եւ ընդհանրցումներ:

Գիտական այդ վերընթացը, ինչպէս նաեւ 1964ի Վենետիկեան կոնվեցնիայի քիչ թէ շատ ազատ հիմնադրոյթները հնարաւորութիւն ընձեռեցին հայ վերականգնող ճարտարապետներին գործել ոչ միայն ճշգրիտ գիտական հիմնաւորումներով, այլ ցուցաբերել որոշակի ստեղծագործական մօտեցումներ, ի հարկէ, միայն հաւաստի նիւթի հիման վրայ (բացում, լրացում):

Այդ ժամանակահատուածում ամրակայման եւ անասթիլոզի մեթոդներին զուգընթաց սկսուեց կիրառուել նաեւ մասնակի վերականգնման սկզբունքը հետեւեալ յուշարձաններում՝ Սիսիանի Ս. Յովհաննէս եկեղեցի (1960), Սէլիմի քարաւանատուն (1960), Բջնի (1960), Խոր Վիրապ (1960-196), Ծիրանաւոր (1963), Սեւանայ թերակղու եկեղեցիներ (1967-1969), Արենի (1967), Մուղնի (1970), Կոչի Ս. Ստեփանոս եկեղեցի (1970), Ալագեազի Ս. Կարապետ (1970), Արուճի եւ Պտղնիի տաճարներ (1978), Գոշավանք եւ Տաթեւի վանք (1978-1986), Սպիտակաւոր եկեղեցի (1988):



Արուճի տաճար





Գոշավանք



Տարեփի վանք



**Գ.՝ 1970ական թուականներից մինչեւ 1980ական թուականները:** Մշակութային արժեքների վերագնահատումը, ազգային ոգու զարթօնքը, գաղափարախօսական ազատութիւնների նուաճումը յանդեցրեց հայկական յուշարձանների ամենաբեղմնաւոր վերականգնման ժամանակաշրջանին:

Այդ ժամանակահատուածում ամրակայման, մասնակի վերականգնման մեթոդներին զուգընթաց սկսուեց կիրառուել նաև ամբողջական վերականգնման սկզբունքը եւս հետեւեալ յուշարձաններում՝ Ամբերդ (1970-1976), Գառնիի տաճար (1970-1978), Մուղնիի վանական համալիր (1973-1974), Կոչի Ս. Ստեփանոս եկեղեցի (1974-1976), Ալագեազի Ս. Կարապետ (1974), Տեղերի վանական համալիր (1975), Ոսկեպարի, Արտաշաւանի, Դաշտադէմի, Կապուտանի, Արենիի եկեղեցիներ, Այրիվանքի ու Մարմաշէնի վանական համալիրներ (1970-1978):




Ամբերդի Ս. Աստուածածին





Գառնիի տաճար



Ոսկեպարի եկեղեցի



Արենիի  
եկեղեցի



Արտաշաւամի եկեղեցի



Դաշտադեմի Սուրբ Քրիստովոր եկեղեցի



Այրիվանքի վանական համալիր



Կապուտանի Սուրբ Միհնաս եկեղեցի

Դ.- Հնդգրկում է 80-ական թուականներից սկսած մինչեւ մեր օրերն ընկած ժամանակաշրջանը։ Քաղաքական, հասարակական շրջադարձային պայմանները՝ անկախ պետականութեան կերտման գործընթացը, ժողովրդավարական յարաբերութիւնների հաստատումը, ազգային կրօնի վերաիմաստաւորումը, այս բոլորը ներկայումս բերում են մշակութային ժառանգութեան ոչ միայն ուսումնասիրմանը եւ պահպանմանը, այլև հասարակական կեանքում նրանց ներդրաւմանը եւ ակտիւօրին օգտագործմանը։ Այսպէս, օրինակ՝ քրիստոնէական պաշտամունքային կատոյցներից շատերը հետզհետէ դադարում են զուտ որպէս թանգարանային հնագիտական ցուցանմուշ, անցեալի լուռ վկայագիր լինելուց եւ ձեռք են բերում իրենց նախնական դերը, այսինքն ծառայում են նաև կրօնական ծիսակատարութիւններին եւ մարդկանց հոգեւոր պահանջները բաւարարելու նպատակներին։

Հասարակական պահանջի այս նկատառումները, այսինքն հոգեւոր արժէքների վերակենդանացումը պայմանաւորում են յուշարձանների, ճարտարապետական համալիրների, քաղաքաշի-

նական համակարգերի վերականգնման արդի նպատակները, հայցակարգային հիմնադրությները, սկզբունքները, գործելակերպը, խնդիրները եւ լուծման եղանակները:


Այսպէս, իրենց նախնական դերը այսօր վերականգնած յուշարձանները (հիմնականում եկեղեցիները) պահանջում են որոշակի ամբողջացում: Ի հարկէ, խօսքը չի վերաբերում ճարտարապետութեան հնագիտական մեծ արժէք ունեցող, բայց ամբողջական վերականգնման համար նիւթական ոչ բաւարար տուեալներ ունեցող յուշարձաններին: Օրինակ՝ բոլորովին կարիք չկայ կատարելու որեւէ նէոլիթեան, բրոնզեդարեան, հելլէնիստական կամ նոյնիսկ վաղքրիստոնէական շրջանների յուշարձանների ամբողջական վերականգնում, որովհետեւ դրանք ժամանակագրօրէն չափազնց հին են, այսինքն ունեն պատմաճարտարապետական մեծ արժէք, իսկ գործածութեան առումով՝ յաճախ անօդտագործելի արդի պայմաններում: Մակայն նկատում է այսօրուայ միջնադարեան վանքային համալիրները, մենաստանները, եկեղեցիներն իրենց օժանդակ տնտեսութիւններով հետզհետէ իրենց իրաւաժառանգորդին՝ Հայ Առաքելական եկեղեցուն վերադարձնելու: Այս առումով կատարուել եւ նախատեսում են մի շարք վանքային համալիրների վերականգնման, բարեկարգման եւ օգտագործման նախագծային աշխատանքներ, իսկ որոշ տեղերում էլ սկսուել են նաեւ վերականգնման շինարարական աշխատանքները՝ կարմրաւոր (1986ից) եւ Սպիտակաւոր (1987ից), Օձունի (1987ից), Արթիկի Սուրբ Գեւորգ (1992ից), Գառնահովիսի (1992), Թալինի Փոքր (1995), Նորավանքի (1995), Օշականի Սուրբ Սիոն (1995) եկեղեցիներ, Երեւանի Կապոյտ մզկիթ (1995-1998), Զուարթնոցի Սուրբ Գրիգոր տաճար (1995-2003), Ուշի (2005-2010) եւ Հաղպարծինի վանական համալիրներ (2010-2012) եւ այլն:



Գառնահովիսի Սուրբ Գեւորգ եկեղեցի



Նորավանքի Սուրբ Աստուածածին եկեղեցի




Թալինի Սուրբ Աստուածածին եկեղեցի




Կարմրաւոր եկեղեցի





Օշականի Սուրբ Սիոն եկեղեցի



Զուարքնոցի Սուրբ Գրիգոր տաճարի վերականգնման նախագիծ  
նարտարապետ Գ. Նալբանդեան



Զուարքնոցի Ս. Գրիգոր տաճար





Ուշի վանական համալիր





Հաղարծինի վանական համալիր



Երեւանի Կապոյտ մզկիթ

**Միջազգային կոնվենցիաների հիմնադրոյթներն ընդունելուց եւ կիրառելուց բացի, հայ վերականգնողները փորձում են օգտագործել նաև իրենց նախնիների վերականգնողական պատմական հարուստ փորձը, որը, մեթոդական, ինֆորմացիոն եւ գեղարուեստական առանձնայատկութիւններով կը հարստացնի մշակութային ժառանգութեան պահպանման եւ վերականգնման համընդհանուր փորձը, կը բնութագրի նաև հայկական վերականգնման դպրոցի առանձնայատկութիւնները, սկզբունքները եւ մեթոդները:**

**Կատարուած դիտարկումները ցոյց են տալիս, որ հայկական պատմաճարտարապետական յուշարձանների վերականգնման արդի մեթոդաբանութիւնը նպատակայարմար է մշակել իւրաքանչիւր յուշարձանի կամ համալիրի համար առանձին, ելնելով՝**

- նրա պատմաճարտարապետական արժեքից (արժեքաւորում),
- գեղարուեստական արժեքից (ներկայացում),
- գործածական նշանակութիւնից (օգտագործում),
- պահպանման ռեժիմի ընտրութիւնից (պահպանում),
- շինարարական-ճարտարագիտական միջոցառումների կիրառումից (ամրացում),
- լանդշաֆտային եւ քաղաքաշինական նկատառումներից (կազմակերպում),
- պահպանուած նիւթի քանակական եւ որակական յատկանիւներից (հաւաստիութիւն),
- տեսական հիմնաւորուածութիւնից (վերլուծութիւն):

**Ամփոփելով հայկական վերականգնման փորձը, կարելի է ասել, որ այսօր անտիկ շրջանի յուշարձանները հիմնականում ամրակայւում եւ թանգարանացւում են, վաղմիջնադարեան յուշարձանները՝ ամրակայւում եւ մասնակի վերականգնւում, զարգացած միջնադարեան յուշարձանները՝ մասնակի եւ ամբողջական վերականգնւում, ուշմիջնադարեան յուշարձանները՝ հիմնականում ամբողջովին վերականգնւում: Ընդ որում ամրակապելով եւ շինարարական միջոցառումներով ընդգծելով ու ամրացնելով հին օրիգինալ հատուածները, վերականգնուող մասերում կիրառուում են թէ' գիտական հետազոտութիւններ, թէ'ստեղծագործական եւ թէ' ճարտարագիտական հնարքներ: Այսինքն, այսօր վերականգնույթը ստանձնում է թէ'գիտնականի, թէ'արուեստաբանի եւ թէ' ճարտարագէտի գուգորդուած առաքելութիւնը:**

**Յուշարձանների գիտական վերականգնումը, բացի մեթոդական հիմնաւորումից, այսօր պահանջում է նաև աւանդական ու նոր շինարարական տեխնոլոգիաների, նիւթերի կիրառում,**

ճարտարագիտական ու կոմունիկացիոն համակարգերի արդիականացում եւ առաջատար տեխնոլոգիաների լայն կիրառում թէ՝ յուշարձանների հետազոտման, թէ՝ նախագծային եւ թէ՝ անմիջապէս շինուողման գործնթացներում։ Հայաստանում այսօր առաւել հրատապ խնդիրներից է վերականգնման գիտահետազոտական կազմակերպութիւնների ձեւաւորման, նրանց տեխնիկական եւ լաբորատոր բազաներով, իսկ շինարարական կազմակերպութիւնները՝ արդի տեխնիկական միջոցներով ու փոքր մեխանիզացիայով յագեցման անհրաժեշտութիւնը։


Յուշարձանների պահպանման խնդիրների լիարժէք լուծման համար անհրաժեշտ է նաեւ օրէնսդրական դաշտի, կիրառման մեխանիզմների կատարելագործումը, միջազգային համաձայնագրերի հետ համաձայնեցումը, միասնական նորմերի, կանոնների ու գնացուցակների, վերականգնման բնագաւառին առնչուող մասնագէտների լիցենզաւորման կարգի մշակումը։


Երկրի ընդհանուր տնտեսական վիճակի, հասարակական նոր պայմանների ձեւաւորման հետ կապուած մի շարք խնդիրների հետեւանքով, այսօր յուշարձանների ուսումնասիրման, պահպանման ու վերականգնման աշխատանքները յաճախ ընթանում են ոչ լիարժէք ծաւալով, դանդաղ ու ընդհատումներով։ Նշենք որ յուշարձանների ամրակայման ու վերականգնման ուղղութեամբ պետական միջոցներ բիւջէից սկսուեցին յատկացուել 2005 թուականից յետոյ միայն։ Սակայն նրանց լիարժէք պահպանման, վերականգնման կամ աւերակ, վթարային ու կիսավթարային վիճակում գտնուող յուշարձանների հրատապ ամրակայման եւ կառուցուածքային համակարգի անհրաժեշտ ուժեղացման համար այդ միջոցները դեռեւս բաւարար չեն։ Տուեալ բնագաւառի հետ կապուած միջազգային կազմակերպութիւնների (իւնեսկոյ, իքոմու, իքուում եւ այլն) միջամտումը եւ օժանդակումն այսօր աւելի քան պիտանի է յատկապէս տեխնիկական, տեխնոլոգիական եւ մեթոդական նկատառումներով։ Բացի պետական եւ Հայ Առաքելական Եկեղեցու սահմանափակ միջոցներից, որոշակի օգնութիւն է ցուցաբերում սփյուռքի հայ համայնքների, բարեգործական, հասարակական, կրօնական կազմակերպութիւնների եւ անհատների կողմից։ Յուշարձանների վերականգնման հիմնական միջոցները այսօր տրամադրում են հիմնականում Համահայկական Հիմնադրամի եւ Հայ Առաքելական Եկեղեցու միջոցով։

Տնտեսական ճգնաժամը հետզհետէ յաղթահարելու հետ զուգնթաց յուշարձանների պահպանման եւ վերականգնման աշխատանքները ընկնում են իրենց բնականոն ընթացքի մէջ եւ

շուկայական յարաբերութիւններում նրանց օգտագործումը շահաւէտ է դառնում նաեւ տուրիզմի տեսանկիւնից: Այսօր արդէն յուշարձանների պահպանման շրջանակները ընդլայնուում են եւ չեն պայմանաւորում միայն պաշտամունքային շէնքերի եւ նրանց քաղաքացիական ու տնտեսական կառույցների օգտագործման անհրաժեշտութեամբ՝ այլ նաեւ հնավայրերի թանգարանացման, ժողովրդական տների, դղեակների, ամրոցների, արտադրական շէնքերի օգտագործման նոր ձեւերի ընտրութեամբ, դրանք յարմարացնելով նոր պայմաններին:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետութեան տընտեսական առաջնային եւ գերակայ խնդիրներից մէկը հոչակուել է զբոսաշրջութեան զարգացման ուղին, ըստ որի յուշարձանների վերականգնման ու բարեկարգման զուգնթաց դիտարկում են հիմնական պատմամշակութային վայրերի այցելուների սպասարկող ենթակառուցուածքների զարգացման հնարաւորութիւնները: Յատկանշական է խոշոր ռուսական կապիտալի ներդրմամբ Հայաստանի կառավարութեան նախաձեռնութիւնը յատկապէս Տաթեւի վանական համալիրի վերականգնման ծրագրի իրականացման քայլերը, ըստ որի պաշտամունքային եւ տնտեսական կառույցների վերականգնման զուգնթաց նախատեսում է նրանց ակտիւներու վերառումը ու օգտագործումը կազմակերպուած զբոսաշրջութեան սպասակման համակարգում: 2010 թուականին վերականգնուեց վանքի պատմական ձիթհանը եւ կառուցուեց մայրուղուց անդնդախոր կիրճի վրայով դէպի վանք տանող ճոպանուղին: Հիմնական համալիրի վերականգնման աշխատանքները կը շարունակուեն նախադային աշխատանքները աւարտելուց յետոյ:





Յուշարձանների պահպանման ոլորտի մասնագետների՝ հիմնականում ճարտարապետ-վերականգնողների, ինժեներների, կոն-

ստրուկտորների պատրաստումը եւ կրթումը Հայաստանում իրականացւում է 1978 թուականից ի վեր՝ Երեւանի Պոլիտեխնիկական ինստիտուտում, այնուհետև՝ Երեւանի ճարտարապետութեան եւ շինարարութեան պետական համալսարանում։ Նոյն համալսարանում 2012 թուականին բացուեց եւ 2014 թուականին թուով 34 առաջին դրանաւարտներ տուեց ճարտարապետների, կոնստրուկտորների եւ շինարար-աշխղեկների վերապատրաստման Միլանի Պոլիտեխնիկական ինստիտուտի մասնագիտական կուրսերը։ Երեւանի ճարտարապետութեան եւ շինարարութեան պետական համալսարանի եւ իտալիայի ամենաանուանի կրթօջախներից՝ Միլանի Պոլիտեխնիկական ինստիտուտի համագործակցութեան յաջողուած առաջին քայլերը, ինչպէս նաեւ յատկապէս Հայաստանի պատմամշակութային յուշարձանների ուսումնասիրման, պահպանութեան, ամրակայման, վերականգնման համար անհրաժեշտ յետագայ համագործակցութիւնը յոյսով եմ չի սահմանափակուի միայն կրթական, այլ նաեւ համատեղ մասնագիտական գիտանախազծային, հետազոտական եւ վերականգնման իրական ծրագրերում։



ԳՐԻԳՈՐ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

**Summary****THE PRESERVATION PRACTICE OF ARMENIAN  
ARCHITECTURAL MONUMENTS****GRIGOR NALBANDYAN**

This article briefly describes the Armenian architectural heritage preservation and restoration experience based on a period of cultural understanding, appreciation, provision and use of principles. An attempt is made to identify international agreements of historic preservation provisions, advanced technology and technical methods of combining resources and traditional construction art. The author underlines also the importance of preparing specialists for the future.